



ՀԱՐԱՐԱԹՎՈՒԹՅՈՒՆ ԳԻՆԵՐ:

Տարեկան գինն է 5 ռուբլի (գինսի ծախսով): Օտարաբաղա-
ջացի բաժանորդները պիտի գինեն այս հասցեով. Bc Tuxuac.
Bc Padoxio Apmaxocod Tosemou „Muxoco“.
Թիֆլիսում կարելի է ստորագրվել խմբագրատան մէջ (սրբորո-
նու տան) և ոչ. տատարեանցի խանութում:

ՄԱՅԱԿ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ:

Մասնաւոր յայտարարութիւն տալու տուողը պիտի վճարէ 10
հասարակ տառի համար 1 կոպէկ արծաթ: Յայտարարութիւններ
տպւում են Հայերէն, Ռուսերէն, Գրաւորէն, Ֆրանսիարէն, Գերմա-
ներէն և Թուրքերէն:

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՐԱՐԱԹՎՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

«Մշակ» տարեկան գինն է 5 ռուբլի, կէս
տարւան 3 ռուբլի: Խմբագրութիւնը ընդու-
նում է յուլիսի 1-ից լրագրիս կէս տարւայ
բաժանորդութիւնը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Կրօն և ազգութիւն: Ներքին տե-
սութիւն: Тифлисск. Вѣстник. Լրագրից: Նամակ
Ալեքսանդրապոլից: Նամակ Աղդաշից: Ներքին
լուրեր: Արտաքին տեսութիւն: Նամակ
Լոնդոնից: Նամակ Կիւսնախտից: Մի քանի
խոսք: Սոսն լուրեր: Առևտրական: Յայ-
տարարութիւններ: Տէլէգրամներ:

ԿՐՈՆ ԵՒ ԱԶԳՈՒԹՅՈՒՆ

I

Ներքային մէջ զետեղւած ազգերը զանա-
զան յատկութիւններ ունեն: Մինը կոչւում է
ազգութիւն, որովհետեւ նրա բոլոր անդամները
միևնոյն ծագումից են, միևնոյն ցեղին են
պատկանում (զուգէ փոքրիկ մասի բացառու-
թեամբ): Միւրը անուանւում է ազգութիւն,
որովհետեւ կազմվելով երեք ազգութիւններից
որոնցից ամեն մինը իր լեզուն ունէր, վերջը
միացել են, կազմել են մի ընդհանուր լեզու,
որ երեքի խառնուրդ է, բայց կրօնով չեն
միացել: Նորորդ ազգութիւնը կազմվել է երեք
ջուրի միջև. այժմ տարբեր միացող տարրերից,
որոնցից ամեն մինը միջև այժմ պահպա-
նում է իր լեզուն, որտեղ տիրում են զանազան
կրօնները, բայց այնու ամենայնիւ նա իրան
անուանում է և ուրիշները նրան համարում են
ազգութիւն, որովհետեւ պատմական պայ-
մանները նրանց երեքին մի միջևի մէջ էին
զցել, մի դրութիւնում մէջ էին պահել, երեքին էլ
միասին զարթեցրել, միասին կուսել տուել բըռ-
նաւորութեան դէմ: Միասին ազգային անկախ
ապստանադրութեան արժանացրել, և նրանց
բարբառական կեանքը այժմ հասում է հանդարտ,
կոպիւրդ երեք տարրերի մասերը մի մարմնի
մէջ...

II

Բայց ներկայացնենք մեզ մի ազգութիւն,
որ պատմական հազարաւոր հարուածներին
ենթարկվելով, անցել է զարկը սպարդիւն և

ՖԵԼԻԷՏՈՆ

Ստիպեցեալ արժանաւորութիւն: Չորսրար ծա-
ռայութիւն: Մեր ուսուցիչներ և տնտեսներ:
Ստիպեցեալ բարեգործութիւն կամ արջի քաղաքա-
վարութիւն: Նոր մտայն: «Լու շայաստանի»
լրագիր: Նոր լրագրի առաջին համարը: Նոր
խմբագրութիւնը և մասնաւոր ազգեցութիւնը: Նոր-
հուրդ բաժանորդներին:

Ինչպէս յայտնի է ընթերցողին ես բուն ա-
սիացի եմ, ուրեմն ունիմ իմ ցեղին յատուկ բը-
լոր արժանաւորութիւնները...

Արժանաւորութիւններից զլիաւորը այն է, որ
ես ամեն հասարակական գործունէութիւնը ձրի
եմ վարում: Գրում եմ, դաս եմ տալիս, ուսում-
նարանները կառավարում, թարգմանում եմ և
այլն, և այլն... Բայց որովհետեւ ամեն բան ձրի եմ
անում, ի հարկէ, ոչ ոք իրաւունք չունի ինձ քննա-
դատել: Մարդը որ ամեն բան ձրի է անում, զոնէ
մի որ և է արտօնութիւն պիտի ունենայ... և ես

արեւնահեղ կոխներին մէջ, որը ոչինչ բաղա-
բական գործադրութիւն չունենալով, յախշտա-
կի էին նրան դէպի կրօնական զգացմունքը, հա-
ւատադրել էին նրան որ նրա վարած բոլոր պա-
տարարութիւնները, նրա արեւնահեղութիւնները չը-
պատակ ունենին ոչ թէ ազգային անկախութիւնը
պաշտպանել, ոչ թէ ոտնախօս եղած իրա-
ւունքների համար արիւն թափել, այլ միայն
կրօնի համար կուսել, Աստուծու գաղա-
փարը պաշտպանել, Քրիստոսի աւետարանի
զինուոր լինել...

Եւ այդպէս, այդ ազգի մէջ ազգութեան
զաղափարը նուազվել է և տեղ է առել կրօ-
նական գաղափարին:

Այս րոպէս էլ նա ազգութիւն բա-
ռով հասկանում է ոչ թէ օրգանական պատ-
մական մարմին, այլ ազգութիւն բառով հաս-
կանում է կրօնը կամ եկեղեցին:

III

Մեր հայոց ազգի մէջ ազգութեան գաղա-
փարը դարձել է հաւասար ազանդի դա-
ղափարին:

Այդ է պատճառը, որ հայը դառնալով
պատահամբ կաթօղիկ, կամ բողոքական, —
այլ ևս իրան հայ չէ համարում, և նրան էլ
իր հայրենակիցները հայ չեն համարում...
Կարծես թէ ընդունելով մի այլ կրօնը, հայի
տիպը փոխվում է, նրա արիւնը արնաւանում է,
կամ նա իր թշուառ բայց հերոսական ան-
ցալը ուրանում է և սեփականացնում է իրան
այն ազգերի անցալը, որից կրօնը ընդու-
նել է:

Այդ բաւական չէ, նա բաժանւում է իր
հայրենակիցների ներկայից էլ, չէ կամենում
մտածել և նրանց ապագայի վրա...: Ուրեմն
թէ այն օրից, որ նա ընդունել է օտար կր-
օնը, նրա մէջ ամեն բան փոխվել է, նա
հրաժարվել է իր ազգութեան բոլոր յատկու-
թիւններից և առանձնութիւններից, նա հրա-
ժարվել է ոչ թէ միայն նրա բարոյական կեան-
քից, բայց և տնտեսական օրգաններից:

IV

Եւ այդպիսի վարմունքի մէջ երևում է
հայի յատկութիւնը, որ դարձելով կրթվելով

ինձ համար արտօնութիւն եմ պահել ամեն իմ
ձրի կատարած գործերը անպիտան կերպով անել:
Որովհետեւ ես ձրի եմ դասատուութիւն անում,
ոչ ոք ինձ իրաւունք չունի նկատել ինչի ես քն-
նականութեան մէջ, օրինակ, տրական հոլովի տեղը
բացատրական եմ գործածում, որովհետեւ ուսում-
նարանի տեսչութիւնը ձրի եմ վարում, կատարեալ
իրաւունք ունիմ վրաս բերել ուսումնարանին:
Որովհետեւ ձրի եմ գրում, կատարեալ իրաւունք
ունիմ բժամիտ յօդվածներ գրել, կամ նիվերը
գողանալ «Судебный журналъ» «Знаіе» կամ այլ
մի ամսագրից և հրատարակել յօդված իմ անու-
նով, որպէս ինքնուրոյն աւանդորդող յօդված...
«Պարսն, ձեր գործ դրած մեթօդը, դասատու-
թեան մէջ փոքր ինչ հնացել է, թող տուեցէք ինձ
ցոյց տալ ձեզ մի նոր մեթօդը որ հիմի գործ է
դրվում, Շվեյցարիայում, Շվեդիայում և այլն...»
— Ձեմ ուզում... պատասխանում եմ ես:

«Ինչպէս չէք ուզում, ես հաւատացնում եմ ձեզ
որ նոր մեթօդայով դուք մի կողմից ժամանակ կը
խնայեք, միւս կողմից էլ աւելի օգտու կը բն-
րէք...»

կրօնական գաղափարների մէջ, սեփականացրել է
իրան այդ հայեացքը՝ կրօնի մէջն է ամ-
բողջ ազգութիւնը:

Հայը դառնալով կաթօղիկ, ասում է՝ ես
հայ չեմ, ես կաթօղիկ եմ: Նոյն իսկ այդ
խօսքը պայտուցանում է թէ նա հայ է, հայի
ամեն յատկութիւններով, որովհետեւ հային
միայն յատուկ է կարծել որ կրօնի հա-
մեմատ մարդս պիտի կրէ այս կամ այն
ազգութեան անունն էլ: Հայը իրան
հայ է ասում միայն նրա համար, որ նա
հայոց-լուսաւորչական եկեղեցուն է պատկա-
նում, — ուրեմն նրա կարծեթով, երբ նա կրօ-
նափոխ լինելով, կը դառնայ անդամ կաթօղիկ
եկեղեցու, նա այլ ևս հայ չէ այլ կաթօ-
ղիկ է:

V

Հայը ամեն տեղ հայ է մնում և այդ ա-
մենալու ապացոյց է, որ դժուար է ոչնչանալ
մի ազգութեանը: Հայը պահում է իր հայի
յատկութիւնը թէ և նա դառնար լուսաւորչական
կամ կաթօղիկ... միայն թէ նա համոզված է
որ փոխելով կրօնը, նա փոխել է և ազգու-
թիւնը:

Նրա մէջ դարձելով արմատացել են սխալ
գաղափարները:

Նա կարծում է որ ազգութիւնն էլ մի
բան է որ ընդունվում է որ և է պատգամով,
ինչպէս որ ընդունվում է կրօնը:

Օրինակ հայերը կրակապաշտ էին, — տա-
րածվեցաւ քրիստոնէութիւնը և նրանք էլ
քրիստոնէայ դարձան: Այնպէս էլ նրա կար-
ծիքով հայը կարող է փոխել և ազգութիւնը՝
այսօր ես հայ եմ, վաղը ընդունեցի կաթօղի-
կութիւն և յանկարծ Ֆրանկ դարձայ:

VI

Հայը չէ հասկանում որ կրօնը համոզ-
մունք է, ուրեմն կրօնը փոխել նոյն է որ փո-
խել համոզմունքները: Սա թէ և գովելի բան
չէ, բայց այնու ամենայնիւ կարելի բան է, —
այն ինչ ազգութիւնը փոխել լոկ անձը փո-
խելով, — անհրաժեշտ է:

Ազգութիւնը համոզմունք չէ, նա մի լոկ
անունն է, նա շապիկն է, որ ամեն օր կարելի

— Ձեմ ուզում... վալ... զօնի բան է...
«Բայց այդ մեթօդը ունի այն առաւելութիւն...»
— Ձեմ ուզում, ասում եմ ձեզ... էդ էր պա-
կամ ձրի դաս տալ և ընդունել ուրիշի խորհրդ-
ները: Մարդը որ ոչինչ վարձատրութիւն չէ ստա-
նում դասատուութենից, — գոնէ իրաւունքը պիտի
ունենայ դաս տալ ինչպէս ուզում է...
«Բայց ձեր գործ դրած մեթօդը հին է, ան-
ճոռնի է...»
— Ձեզ ինչ... ես ձրի եմ դաս տալիս... ու-
ղենամ վրաս էլ կը բերեմ, ձեզ ինչ...
**

Այդ տեսակ վարմունքը անուանում են՝ ա սի ա-
կան բարեգործութիւն, կամ արջի քաղա-
քավարութիւն...
Հետեւելով այդ ազգային, պայծառ յատկու-
թեանը, ես էլ կամենալով ասիական բարեգործու-
թիւնը բանացնել, գիտաւորութիւն ունիմ չուտով
մի լրագիր հրատարակել: Ես պատրաստ չեմ լը-
րագրող լինելու, իմ կեանքումս գիրք կարդացած
չեմ, ծանր և օգտաւէտ խօսակցութիւն կեանքումս

լինէր փոխել, ա զգ ու թ իւ ն ը Ֆ ի զ ի օ լ օ
գ ի ա կ ա ն գաղափար է:

VIII

Ինչպէս մի մարդու բնաւորութիւնը զանա-
զանվում է ուրիշից, կախված լինելով մարմնի
կազմվածքից, կլիմայից, որտեղ մարդը ծնվել է,
որի ազդեցութեան տակ մեծացել է ու կրթ-
վել, այն շրջանից, որտեղ մարդս երեխայու-
թիւնից ստուել է, կեանքի ընթացքի հանգա-
մանքներից, — նոյնպէս և ազգութեան զոյու-
թիւնը լինելով պատմական և օրգանական, նրա
բնաւորութիւնն էլ կախված է ցեղից, հայ-
րենիքի աշխարհագրական և տեղագրական դըր-
բից, կլիմայից, պատմական ընթացքի հանգա-
մանքներից: Մի խօսքով, մի ազգի բնաւորու-
թիւնը կախված է թէ տեղական, ներքին
յատկութիւններից, թէ արտաքին երևոյթների
ազդեցութիւնից:

Ազգութեան մարմնը զոյանում է, մեծա-
նում է և կազմակերպվում, ինչպէս և մե-
ծանում ու կազմակերպվում կենդանու կամ
մարդի մարմնը, ենթարկվելով շրջանի ազդե-
ցութեանը:

Այն, ինչ որ դարձելով կազմակերպվել է՝
երկրի, պատմութեան, կլիմայի, ցեղի ազդե-
ցութեան տակ, անկարելի է մի րօպեում փո-
խել ասելով՝ այս օրվանից սկսած ես էլ հայ
չեմ, ես այսօր զնացի կաթօղիկ եկեղեցի աղօ-
թելու համար, իմ ասած աղօթքս փոխել է
ազգիս տան անգամ հարիւր տարւայ ան-
ցալը, փոխել է երկրիս դիրքը, կլիման, փո-
խել է ցեղս, տիպս, լեզուս, արեւս, — ուրեմն
եւ այսուհետեւ հայ չեմ, ես Ֆրանկ եմ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Ռուս «Тифлисскій Вѣстник» լրագիրը
գրում է հետեւեալը:

Հռչակաւոր հայադէտ Վիւրթին մի չա-
փազանցութիւն է անում, որ շատ յատուկ է
մասնազետեղել իրանց առարկայի վերաբե-
լութեամբ՝ նա համամտում է հայրենի խի-
սիսային ամբերկացիների հետ: «Ամէն տեղ, —
բռնած չեմ, անկիրթ եմ, տղէտ եմ... բայց ձեզ
ինչ... լրագիրս ձրի կը բաժանեմ, ուրեմն կատա-
րեալ իրաւունք ունիմ բժամիտ բաներ գրել նրա
էջերում:

Եւ բացի ստրանից, հիմի մօղա է լրագիր հրա-
տարակել...

**

Ուրեմն սկսում եմ,
Փոխանակ երկար մի առաջարան անելու, փո-
խանակ պատմելու թէ ինչ ուղղութիւն և պրո-
գրամ կ'ունենայ լրագիրս, — ահա առաջարկում եմ
ընթերցողին լրագրիս առաջին համարը:

ԼՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Լրագիր անաթական և
ոչխարային

№ 1

Թիֆլիս յունիսի... — Ին 1873. Յայտնի է որ
կան մարդիկ որոնք բարոյական են, և կան էլ ան-
բարոյական անձինք՝ վերջիններս որը անբարոյա-
կան են, նրանք բարոյական չեն, ուրեմն նա չէ
կարող մարդ կոչվել որ այդ բարձր, վսեմ բառի

երբ թող մարդ են, ծանր պօլիմիկայի մէջ, սկսում են հայտնաբերել և լուսանկարներ արձակել:

Մեր քաղաքում նոյնպէս մուրը չատ թանդ չեն ծախում, եթէ պէտք լինէր նոյն գործածութիւնը: Բայց ով անտրտալ ունի արատաւորել իւր ձեռքերը:

Գրականութեան մէջ այս և այն անձին պոստ-դոնի մը մերկայանել կատարել անապատութիւն է: Այդ պատճառաւ, ոչ ոք իրաւունք չէ տալիս պ. Շերմազանեանին ասել, թէ Մելիքզադէն Բաֆֆին է, կամ Բաֆֆին Յակոբ Մելիքզանն է և այլն: Որովհետեւ, այդ անունները, ով որ և լինէին նոյն, Նիկիէի, Փարսկոյ և Աւարայրի դաշտի հետ, ոչինչ կապ չունեն:

Բայց թէ Մելիքզադէն էլի կամ ուրիշ վերահեծնելով է ճանապարհորդել այն կողմերը, և դուր համար նորա խօսքերի մէջ ճշտութիւն չը կայ, այդ չափ իրաւացի է: Ինչ պէտք է արած, երկրի սովորութիւնները դէմ մարտնչելը դժուար բան է: Երեւելի վամբերին ևս էլով անցաւ Պարսկաստանը: Այդ բանը կարծես թէ, արեւելքի ճանապարհորդների ճակատագիրն է: Միայն շատ քչերն է յաջողում հարստանալ, վաղի և դիւղի տէր դառնալ, և նոյնը ձի նստած, փառնայ դիւղին մի քանի ժամուայ մէջ մինչև խոր-վիրայ հասնել և լաւ հետազոտել երկիրը...

Պարսի Գարնաւս ես իմ կողմից վերջացնում եմ իմ բանական ձեռք հետ, զուցէ պարսի Բաֆֆին ինքը կը պատահանէ ձեռք, որովհետեւ, ես թէ և մինչև այսօր համոզուած եմ, որ զուգ լաւ պատմաբան է. (բայց չը դիմեմ...) Միայն թարեկամարդ խորհուրդ եմ տալիս ուշադրութեամբ կարդալ ձեր առաջին և երկրորդ յօդուածները, եթէ կայ նոյն մէջ միայն, դուք կը համոզուիք, թէ որքան հակառակուածք ինքներդ ձեռք: Պարսից առածը ասում է. «ստախոսները յիշողութիւն չունեն»: Մի և նոյն հակառակութիւն է պատահում գրականութեան մէջ, երբ մարդ ամէն բայէ մի նոր խօսք է խօսում:

Մելիքզադէ

ԽՈՒՆ ԼՈՒՐԵՐ

«Մասիս» լրագրում կարդում ենք, «կը լսենք թէ քանի մի հայ գրողներ խմբագրութեան և մեծագույն ձանձրի է ֆէյտի: Արամեանի տնօրէնութեամբ ու գործակցութեամբ ամսուր 16-էն սկսեալ «Խիտակ» անուն շաբաթականը մը պիտի հրատարակուի»:

Նոյն լրագիրը հաղորդում է և հետեւեալը կը յիշեն ընթերցողը, որ անցեալ տարի Բաքուի մէջ հայ աղջկան մը պատճառաւ տեղւոյն մտնողները Տաշիկները ծանր բռնութիւններ գործածէին Հայոց դէմ, և մինչև իսկ Առաջնորդարանն ու քանի մ'աղ մանուկները տուներ կոխելով առաքաւորութիւն ըրած: Այն բռնութեանց հնդկական մէջ: Մեր մինչև այսօր անպատիվ թողուած և Հայոց կրած նիւթական վնասներն ալ առանց հատուցման մնացած ըլլալով, մայրաքաղաքը գտնվող Բաքուից աղջկանք երեք աղքատներ մատուցին Վ. Ս. Սուլթանին:

Մի քովայնից պարունից ստանում ենք ապրիլ թէ մայիս ամսին 5 ուրբի «Մշակ» տարեկան գինը: Չէ անցնում երկու շաբաթ, պարունը գալիս է Թիֆլիս և ներկայանալով խմբագրութեանը հարցնում է՝ ինչի չէք ուղարկել իմ համարները: Ուշացանք փոքր ինչ, եթէ ուղէկ որ ուշացնէինք պիտի յաջողութեամբ ստորագրէինք... Բայց հիմի էլ չեմ ուզում, պատասխանում է պարունը, ինչդրեմ իմ հինգ բուրլիս յետ տաք...

Մի օտար քաղաքացի վաճառական (բոս երեւելի է Հայաստանից) գալիս է «Մշակ» խմբագրութեանը և յայտնում է թէ կամենում է ստորագրել «Բանի աճէ ձեր լրագիրը»-Մի տարվայ գինը 5 բուրլի, կէս տարվանը 3 բուրլ, չէ, շատ թանկ է աղա: Ես կ'էս տարվանը կ'առնեմ, ամա երեք բուրլից տաս չափի պակասացրէ՛ք:

Թարեկից գրում են մօլաներից մինը Ֆաթալի-բէկը քարվանսարի մօտ գնած է եղել մի աւերակ տեղ, ուր նպատակ ունէր կառուցանել մզկիթ: Մայիսին լին գնալը փորելու միջոցին,

յայտնվում են ստորերկրայ խորքեր, որտեղից զըռնում են մեծ զանգ: Ահապէս պղնձ և խեցեղեն ամանների մէջ լեցրած զուրս են բերվում արծաթի դրամներ, որոց մեծ մասը լինում են հայոց դրամներ կլիկապոյ թագաւորութեան ժամանակից, որը պատկանում են Ղանին և Հեթումին: Շահի ժառանգը, որ Թարեկում է լինում, լսելով այդ համարը, ուղարկում է զօրք, չըջապատում են այն տեղը, դառնաւ արծաթի սեղանակաւում է տեղաւորւում զանգարանին, և հրամայում է յառաջ տանել այնտեղ փորելու գործը: Մեր նամակագիրը յայտնում է, որ այնտեղից զուրս եկած մի քանի քարերի արձանագրութիւններից երեւում է, որ սակաւին շատ փոքր թաղուցած են այնտեղ:

Նորերում վախճանիցաւ երեւելի խաղացի բանաստեղծ Ալեքանդր Մանյոնի, որ ծնաւ Միլանո քաղաքում 1784 թ.: Նորա գրականի մէջ ամենաերեւելի է I promessi sposi. Նա թէ և պատասխան էր բայց մինչդեռ ժամանակ կրօնական ուղղութեան և այդ ուղղութիւնը ծագում էր խորքիստոնէական զգացմունքից: Նա զուգ էր իտալիայի ճնշված դրութիւնը, բայց չէր մասնակցում ըզրաքանդան կրթման և այդ չէզոք դրութիւնը չէր ծագում կրօնական բնաւորութիւնից կամ անտարբերութիւնից, բայց քաղաքական սուպարիդից իրան հեռու պահելու պատճառը, զգայուն սիրան էր և բնական համապատասխանը:

Ուֆա քաղաքից հաղորդում են «Голос» լրագիրը, որ այդտեղի պաշտօնականից մինը նորերում ասել է, որ լրագիրները թ զի աղիցները արժանի են որ նրանց բերանը ջնկ կոխեն: Նոյն քաղաքի քահանան նորերում մի քաղաք էր կարդացել, որտեղ ասել էր թէ խմբագիրներն և թ զի աղիցները անաստուած մարդիկ են, որ ոչինչ կարեւորութիւն չունեն դէպի իրանց եղբայրները:

Յունիսի 25-ին նոր լուսանալու ժամանակ Թիֆլիսի յաւուրում թաղում երեք մարդ սպանվեցան անցաւ չարագործների ձեռքով:

Յրանսիական տէրութեան կարգադրութեամբ երեւելի ֆրանսիացի և ուրբէ նկարչի պատկերները բռնկեցան նրանց ծախելուց ստացած գումարը սկսել գործ դրել Վանքում և մեծ միակնանկու համար, որ, ինչպէս յայտնի է, գլխաւորապէս և ուրբէի խորհրդներով քանդից փարկից ժողովուրդը: Այնպէս ասելով, միայն ինչի չէք յիշատակ Նա ալ ուրբէ օրէն փառքի: Նրը դատաստանի ժամանակ կուրբէից հարցրին թէ ինչի նա զրդից ժողովուրդը քանդել Վանքում ասելով:—Նա պատասխան տուց թէ յիշալ արձանը ձեւերի կողմից մեղանշում էր գեղարվեստական կանոնների դէմ:

Յունիսի 5-ին հանդիսաւոր կերպով բացվեցաւ երկաթուղու դիմը Կ. Պօլսի և Ադրիանուպօլսի մէջ:

Շահի հետ Գերմանիա եկած պարսիկներից մինը Վիսապուրէն քաղաքում գտնվելով, ցանկացաւ լողանալ այդտեղի Գրանտ-Օտէլի մէջ, որտեղ կայ մի հիւանդի հրապարակական աւաղան հանքային ջրով: Պարսիկին տարան առանձին մի սենյակ, որտեղ պարտաւորւած էր բաղնիքը: Չանցան մի քանի րօպէներ և զբոսնող ընտիր հասարակութեան մէջ չիլով ընկաւ: Պարսի պարսիկը դարձեալ չը համարեց նա փառաւոր կերպով գտնելու իր սենյակից, դրեմ է առանց չորերի, մօտեցաւ աւաղանից և հանդիստ նստելով նրա մօտ, սկսեց կատարել իր նամարը...

«Սիրելի» ուս լրագիրը հաղորդում է որ իր կուսակ քաղաքում դիտաւորութիւն կայ հիմնել շուտով փոխադարձ կ'ըլլէ իր երեւելի ընկերութիւնը:

ՏԵՂԵԿԱՅՈՑ

ՓՈՍՏԸ, Ռուսաստան և Արտասահման ամեն օր, բացի կիրակի օրից: Երկուշաբթի, Գուրկայիս, Չէրնոսովի վիճակ, Սուխում, Երեւանի դաւաւ: Երեքշաբթի, Բաքու, Գանձակ, Գաղտանի հանգանք (Թեթիս փոստը): Չորեքշաբթի Գուրկայիս և Ալեքսանդրապօլ: Ուրբաթ-Գուրկայիս, Երեւան, Նուրի, Չարաթալ, Ախալցխայ: Շաբաթ, Բաքու Գանձակ (ծանր փոստը):

ՓՈՒԹԻՏԻՍԵԱՆ ԵՐԿԱՌՈՒՂԻՆ Գնում է ամեն օր: Տաւա պարհարդն երբեք զնայքը (մինչև փօթի) առաւօտ 8 ժամին 8 րօպէ: Խառն գնացքը (մինչև Սուրա) երեկոյան 8 ժամին, 17 րօպէ: Գալիս է՝ ծանապարհորդների գնացքը երեկոյան 10 ժամին, 49 րօպէ, խառն գնացքը 3 ժամին 13 րօպէ կէս օրից յետոյ:

ՀԻՒՆԴԱՆՈՅԸ Երեւելի հիւանդների համար գտնվում է Ս. Նշան եկեղեցու մօտ Եւթօր Ղաւրճի տանը և բաց է ամեն օր հիւանդների ընդունելութեան համար առաւօտեան 8 ժամից մինչև 10 ժամը:

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ

ԹԻՖԼԻՉԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ (Յունիսի 27-ին):

ՈՍԿԻՆ, (պօլսիմպէրալ)	6	9	4
ԲԱՄԲԱԿԸ Երեւան	4	45	—
Երկրորդ տեսակը	4	30	—
Ամբիկաի սերմից	6	40	—
ԲՈՒՐԴԸ Թուշ	7	80	—
Երկրորդ տեսակը	6	40	—
Թարեւածի	5	—	—
ՇԱՔԱՐԸ Ռաբ (Բրօզիկ)	7	70	—
Միւս տեսակը	7	50	—
Զաղաւնից տարակից	5	20	—
մաքուր վճարած	8	70	—
ՇԱՔԱՐԱՆԱԶ Ռաբ	6	40	—
ՂԱՉՎԱ Լիվանի լաւ	15	—	—
Մօկո, շատ լաւ	16	50	—
Մարտինիկո, ցածր	12	—	—

ԱԼԻԻՐԸ Երեւանի առաջին տեսակը	1	40	—
Երկրորդ տեսակը	1	30	—
ԱԼԻԻՐԸ Գնանքու հասարակ	1	60	—
Շորաղեւաւ	1	50	—
ԳԱՐԻՆ Երեւանի	—	70	—
ՊԼՊԵՂԸ	11	—	—
ՇԻՐԱՆՏԻ ձէթ	9	—	—
ՄՈՍ	11	80	—

ԱՐՏԱՍԱՀԱՄԱՆ ՎԱՃԱՌԱՆՈՑ

ՓՈՒՆԱԿ, բարձր պօլս 6—70
Թարեւածի վճա 4—75
ՄԱՐՏԵԼ և Գարիկ, 100 բուրլին աճէ 345½ ֆր.
ԼՕՆԴՈՆԻ վերա, (Օղէտայի կուրք) 7 բուրլ 41½ կուղէկը աճէ 1 լիւրա
ՄԱՐՏԵԼԻՍ Բաւալի 50 քիւլօ (3 փութ 2 ցրէ) ծախվում է —

(ՄԱՐՏԵԼԻՍ Երեւանի Ամբիկա սերմի բամբակ ծախվում է 90 ֆր.
առաջին տեսակը 64 ֆր.
Երկրորդ տեսակը 52 ֆր.
ՄԱՐՏԵԼԻՍ Թուշի սպիտակ բուրլը ծախվում է 112 ֆր.
Երկրորդ տեսակը 95 ֆր.
Գառան բուրլը աճէ 100 ֆր.
Թարաք. բուրլը աճէ 70 ֆր.
Գարաք. բուրլը աճէ 60 ֆր.
Երկրորդ տեսակը 55 ֆր.
ԿՕՍԱՆԴԻՆՈՒՓՈԼՈՑ Խաղի Նուրկայ թելը (մեաքը) շատ ընտիր 147 բուրլի:

ՊԵՏԵՐՈՒՐԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ (Յունիսի 15-ին)

ԼՕՆԴՈՆ—մի ուրբի աճէ 32¼ պէնս (փառանակ 40 պէնս):
ՓԱՐԻՉ—մի ուրբի աճէ 343 սանտիմ (փառանակ 400 սանտիմ):
Առաջին ներքին 5% փոխառութեան տոմսի 158½
Երկրորդ 156½
5% Բանկի տոմսակ 1 ջրջանի 95¼
" " " 2 ջրջանի 95¼
" " " 3 ջրջանի 95¼

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Պարկիմախէր Պէրօն յայտնում է, որ Թիֆլիսից հիւանդաւ պատճառով, կամենում է յանձնել իր առուտուրը: Համաձայն է և ծախել ապրանքը մաս մաս: Հասցեն Աւրանի հրապարակ Թիֆլիսում, Խարազովի տանը, որտեղ որ գտնվում է Պետական Իսկի Իստիքը:

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՄԱԿԱՏՈՎՈՒԹԻՒՆ և ապրանք պահելու լուս փարանտների հաստցմամբ Հիմնական գրամաշուխ 3,000,000 բուրլարծ:

ՄԱԿԱՏՈՎՈՒԹԻՒՆ կրակի գէտ ամեն տեսակ շարժական և անշարժ կայքի տներ, խանութների, ապրանքի, Փարթիկների, գաւփօնների, մէրէի, սնային կայքի, երկաթուղու շինութիւնների և այլն կայքերի, ամբողջ Անգլիոյ վիճակում: Ապահովանում է պատկառ զեռով քան թէ այլ ապահովութեան ընկերութիւնները:

Թիֆլիսի գործադատութեան գրասենեակը գտնվում է Ղաւրճօփի փողոցում, Եւթօրուտ տանը: (Дворцовая улица, домъ Арцруни):

ԲԱՐՁՐԱԳՈՅԸ հաստատված վիճակաւոր մասնագործը յօդուտ բարեգործական և կրթութեան ՀԻՄՆԱԳՈՒԹԻՒՆՆԵՐԻ Արկաւաւում և Անդրկովկասում, Օդեսայի Կառնաւորութեամբ Նորին Կարճուրութեան ՕԼԴԱ ՖԵՒՐՈՐՎՆԱՅԻ, պատիւ ունի յայտնել որ բաց անկող իր գործունէութիւնը, ծախելու է 200,000 տոմսակ, ընդամենը 2,000 ստացուածք (վիդուլ), որոնցից զգաւորները ա) Հոգ, մասամբ Աւ ծովի ափին, մասամբ կովկասեան ուրիշ տեղերում, որք յարմար են զիդատտեսութեան համար: Հինգ ստացվածք 200 դէտիաինի տարածութեամբ իւրաքանչեւը, Հինգը 100 դէտիաինի, տարւ, — 50 դէտիաինի: Բ) Ոսկեայ և արծաթեայ իւրեւերի ստացվածք 1500 բուրլի խաղաղանչելու, Հինգ 1000 բուրլ, տարւ 500 բուրլով, տարւ 200 բուրլի, տան և Հինգը հարիւր հարիւր բուրլի: Գ) Հաղար ինն հարիւր և երեսուն ութ ստացվածք ոսկեայ և արծաթեայ ոչ այնքան թանկագին իւրեր, նոյնպէս և բրօնզից և այլն:

Տոմսակի ԳԻՆԸ է 1 բուրլ, Տոմսակներ կարելի է ստանալ պարտադրան կանտորաներում, դաւառական և նահանգական Հիմնարկութիւններում և քանի մի մաս նաւոր անձանց մօտ, որք բարեհաճել են նըպատակ այդ գործին:

Նորերում գուրս եկաւ և ծախվում է Վ. Շաչկերդեանի «ԵՆԿԱՏՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄ» անունով տիգեական գործնական ձեռնարկը տարրական ուսումնարանների համար: Գինն է 50 կո:—Նամագարձի ծախը Հինգիակի վելայ է: Ծախվում է Թիֆլիսի գրականատանոցներում և պ. Ի. Մարտինի խանութում, Առկիայի կամուրջի վերայ:—Օտար քաղաքացիները կարող են ստանալ ուղղակի Հինգիակից այս հասցեով: Тифлисъ. Вацино Шавердову, въ редакцію газеты „Мшакъ“
Գիրքը բաղկանում է 8 վիցաձայ թերթիկից. բնագիրը, բացի յառաջաբանից և ցանկից, բաղկանում է 176 երկնից և 101 յօդուածներից. գլխաւոր ծանօթութիւններով: Գրքի բովանդակութիւնը:

Առաջին մաս (ա) ուսուցանելու եղանակը) դաստասն մէջ գտնվող առարկաների հետ ծանօթութիւն. Գ) նախընթաց կրթութիւնը ների մէջ նկարագրած առարկաների համեմատութիւնը (նմանութիւն և զանազանութիւն). բնական, պատմութեան և սկիզբը Գ) բնատուր կենդանիներ. Ե) վայրերի կենդանիներ. Դ) այս կենդանիների համեմատութիւնը միւս մասից հետ (նմանութիւն և զանազանութիւն). Թ) աշուններ, Ը) սողունների և ձկների, Թ) միջատների, Ժ) մարդ, Կ) ծանօթութիւն հայրենիքի հետ:

Երկրորդ մաս. խառն հաստատմանը ընթերցանութեան համար այս մասը բաղկանում է 33 յօդուածներից: Այս յօդուածների բովանդակութիւնը վերառած է երկնայի շըրջապատող կենդանի և բնութիւնը: